ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ՇԴ/7184/02/22**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«09» հուլիսի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

քննարկելով ըստ «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայցի ընդդեմ «Մունլայթ Լայֆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ) և «Տավրոս ԿՎՄ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ)՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ին և «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ին պարտավորեցնել կատարել պայմանագրային պարտավորությունները՝ վաճառքի օպցիոնի շրջանակներում իրենից 83.300.000 ՀՀ դրամով գնել «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ում իր բոլոր բաժնետոմսերը:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.05.2023 թվականի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.09.2023 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, և

Դատարանի 26.05.2023 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը վերացվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.03.2024 թվականի որոշումներով «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի և «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ի բերած վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժվել են:

Սնանկության դատարանի 28.11.2023 թվականի վճռով «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ (սնանկության գործ թիվ ՍՆԴ/2860/04/23):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.07.2024 թվականի որոշմամբ «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Սնանկության դատարանի 28.11.2023 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սնանկության դատարանի (դատավոր Ս. Թադևոսյան) 24.02.2025 թվականի վճռով «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժվել է (սնանկության գործ թիվ ՍՆԴ/2860/04/23):

Սնանկության դատարանի 24.02.2025 թվականի վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Երիջանյանը 24.06.2024 թվականին որոշում է կայացրել «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի մասով վարույթն առանձնացնելու և այդ մասով գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին (քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0595/02/24)՝ պատճառաբանելով, որ.

«ՀՀ Սնանկության դատարանի 28.11.2023 թվականի թիվ ՍՆԴ/2860/04/23 վճռի համաձայն՝ սույն քաղաքացիական գործով պատասխանող «Տավրոս ԿՎՄ» փակ բաժնետիրական ընկերությունը ճանաչվել է սնանկ: Ընդ որում, սնանկության գործը, սույն որոշման կայացման պահի դրությամբ դեռևս գտնվում է քննության փուլում: Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պատասխանող «ՏԱՎՐՈՍ ԿՎՄ» ՓԲԸ-ի մասով պետք է առանձնացնել և այն հանձնել Հայաստանի Հանրապետության Սնանկության դատարանի քննությանը»:

Առանձնացված վարույթը՝ «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ի՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին կից փաստաթղթերով (քաղաքացիական գործի ամբողջ նյութերի բնօրինակներով)՝ շարունակել է քննվել առանձին վարույթում թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործի համարի ներքո:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Երիջանյանը 19.08.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«28.10.2022 թվականին «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» ՓԲԸ-ն հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ի և «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որով խնդրել է պարտավորեցնել «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ին և «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ին կատարել պայմանագրային պարտավորությունները՝ վաճառքի օպցիոնի շրջանակներում «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» ՓԲԸ-ից 83.300.000 ՀՀ դրամով գնել «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ում «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» ՓԲԸ-ի բոլոր

բաժնետոմսերը: ՀՀ Սնանկության դատարանի 28.11.2023 թվականի թիվ ՍնԴ/2860/04/23 վճռի համաձայն՝ սույն քաղաքացիական գործով պատասխանող «Տավրոս ԿՎՄ» փակ բաժնետիրական ընկերությունը ճանաչվել է սնանկ: Ընդ որում, սնանկության գործը, սույն որոշման կայացման պահի դրությամբ դեռևս գտնվում է քննության փուլում:

Դատարանը, քննարկելով հայցվորի պահանջը՝ վաճառքի օպցիոնի շրջանակներում Ընկերությունից 83.300.000 ՀՀ դրամով սնանկ ճանաչված «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ում Ընկերության բոլոր բաժնետոմսերը «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ին գնելու պարտավորեցնելու մասին, գտնում է, որ պահանջը վերաբերում է սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված իրավունքներին և սույն գործով կայացվելիք դատական ակտը առնչվելու է «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի իրավունքներին, ուստի գործը ենթակա է ըստ առարկայական ընդդատության հանձնման Սնանկության դատարանի քննությանը՝ նույն սնանկության գործի շրջանակում քննելու համար: Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված իրավունքների առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում»:

Սնանկության դատարանի դատավոր Ա. Խաչատրյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 02.10.2024 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

«Տվյալ դեպքում հայցվոր Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ին իրենից գնել 83.300.000 ՀՀ դրամով գնել ներկայումս սնանկ ճանաչված «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ում իր բոլոր բաժնետոմսերը:

Դատարանը գտնում է, որ սույն գործով կայացվող վերջնական դատական ակտը չի վերաբերում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկային, նշված քաղաքացիական գործը չի հանդիսանում պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործ:

Տվյալ վեճի լուծումից հետո հնարավոր է փոխվի սնանկ ճանաչված պարտապան ընկերության՝ «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի սեփականատերը, «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» ՓԲԸ-ի փոխարեն այն դառնա «Մունլայթ Լայֆ» ՍՊԸ-ն, ինչը չի կարող ազդել «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի գույքակազմի կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը, քննարկելով թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, ***15.10.2024 թվականի*** որոշմամբ արձանագրել է, որ թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Սնանկության դատարանի (դատավոր Ա. Խաչատրյան) 23.10.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Մալխասյանի 23.07.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/0595/02/24 քաղաքացիական գործն ըստ Ընկերության հայցի ընդդեմ «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ի՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Մալխասյանը 03.10.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0595/02/24 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 28.11.2023 թվականի թիվ ՍՆԴ/2860/04/23 վճռի համաձայն՝ «Տավրոս ԿՎՄ» ՓԲ Ընկերությունը ճանաչվել է սնանկ, թիվ ՇԴ/0595/02/24 քաղաքացիական գործով հանդիսանում է պատասխանող կողմ և սնանկ ճանաչված գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող քաղաքացիական գործ է, Դատարանը գտնում է, որ թիվ ՇԴ/0595/02/24 քաղաքացիական գործը պետք է հանձնել Սնանկության դատարանի քննությանը»:

Սնանկության դատարանի (դատավոր Ա. Խաչատրյան) 21.10.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/0595/02/24 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Սնանկության դատարանի (դատավոր Ա. Խաչատրյան) 23.10.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/0595/02/24 և թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործերը միացվել են, քննությունը շարունակվել է թիվ ՇԴ/7184/02/22 համարի տակ:

Թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը 08.11.2024 թվականին մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Ս. Թադևոսյանին, 15.11.2024 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Սնանկության դատարանի դատավոր Ս. Թադևոսյանը 11.06.2025 թվականին որոշում է կայացրել թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«Դատարանի 24.02.2025 թվականի վճռով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիմումն ընդդեմ «Տավրոս ԿՎՄ» ՓԲ ընկերության՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին, մերժվել է: (...) ՀՀ սնանկության դատարանում ներկա պահին բացակայում է «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ մասնակցությամբ սնանկության վարույթ, իսկ թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործով վեճի կողմերը չեն հանդիսանում թիվ ՍՆԴ/2860/04/23 սնանկության գործով պարտապանն ու պարտատերը, որպիսի պարագայում Դատարանի գնահատմամբ բացակայում է նաև թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի կողմից քննելու իրավական հիմքերը»:

Գործն ստացվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և 20.06.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Ա. Երիջանյանին:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Երիջանյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 30.06.2025 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

«Դատարանի գնահատմամբ ՀՀ սնանկության դատարանում ներկա պահին «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ մասնակցությամբ սնանկության վարույթի բացակայությունը, իսկ թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործով վեճի կողմերը թիվ ՍՆԴ/2860/04/23 սնանկության գործով պարտապան և պարտատեր չհանդիսանալը չի հանգեցնում թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի կողմից քննելու իրավական հիմքերի բացակայությանը, քանի որ տվյալ պարագայում վեճը ծագել է պարտապանի մասնակցությամբ կնքված Համաձայնագրի կապակցությամբ, ինչն արձանագրվել է 15.10.2024 թվականին ՀՀ

վճռաբեկ դատարանի որոշմամբ, իսկ նման պայմաններում քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

(...) Դատարանի գնահատմամբ, բացի վերոգրյալից, հաշվի առնելով, որ սնանկության գործն ավարտվելու դեպքում առանձին քաղաքացիական գործերի քննությունը շարունակվում է, եթե առկա չեն այդ գործերի վարույթը կարճելու կամ այդ գործերով հայցը առանց քննության թողնելու հիմքեր, և նկատի ունենալով «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ մասնակցությամբ սնանկության վարույթի բացակայությունը, ինչը ծագել է սնանկ ճանաչելը մերժելու մասին վճիռ կայացնելու արդյունքում, ըստ էության իրենից ենթադրում է սնանկության վարույթի ավարտ, ուստի բոլոր դեպքերում սույն գործը որպես առանձին քաղաքացիական գործ պետք է շարունակվի քննվել ՀՀ սնանկության դատարանի կողմից (...)»:

Թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 04.07.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Նույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից.

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Միաժամանակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ սնանկության գործն ավարտվելու դեպքում առանձին քաղաքացիական գործերի քննությունը շարունակվում է, եթե առկա չեն այդ գործերի վարույթը կարճելու կամ այդ գործերով հայցը առանց քննության թողնելու հիմքեր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ առանձին քաղաքացիական գործերը սնանկության վարույթում կենտրոնացնելու և քննելու անհրաժեշտությունը պայմանավորված է արդյունավետ դատավարական ընթացակարգեր կիրառելու անհրաժեշտությամբ, որն ուղղակիորեն պայմանավորված է նվազագույն ծախսերի կատարմամբ գործերը ողջամիտ ժամկետում քննելու Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ամրագրված պահանջով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի հատուկ կարգավորումը, անհրաժեշտ է համարում նշել, որ սնանկության գործի

ավարտն ինքնին դրա շրջանակում քննվող առանձին քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հիմք չէ:

Սնանկության գործն ավարտվելու դեպքում դրա շրջանակում քննվող քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու իրավական հիմք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը չի սահմանում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը բխում է դատավարական խնայողության սկզբունքից, քանի որ սնանկության վարույթի ավարտի հիմքով դրա շրջանակում առանձին քննվող քաղաքացիական գործերի հանձնումն այլ դատարանին կհանգեցնի նվազագույն ծախսերի կատարմամբ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի խախտման:

Հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով սնանկության գործի շրջանակում քննվող առանձին քաղաքացիական գործերը շարունակվում են, և իրավասու դատարան է հանդիսանում Սնանկության դատարանը՝ անկախ սնանկության գործն ավարտվելու հանգամանքից, եթե առկա չեն նույն մասով նախատեսված բացառությունները:

Ավելին՝ նկատի ունենալով, որ սնանկության գործերն առաջին ատյանի դատարանում վարվում են դատավորի կողմից միանձնյա, հետևաբար գործը ենթակա է քննության հենց սնանկության գործը վարող դատավորի կողմից:

Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը, դեռևս 15.10.2024 թվականին քննելով թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրել է, որ թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործն ըստ «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ «Մունլայթ Լայֆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Սնանկության դատարանը (դատավոր Ս. Թադևոսյան) որոշում է կայացրել քաղաքացիական գործն ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը հանձնելու մասին ***բացառապես*** այն պատճառաբանությամբ, որ *Դատարանի 24.02.2025 թվականի վճռով «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժվել է, ՀՀ սնանկության դատարանում ներկա պահին բացակայում է «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ մասնակցությամբ սնանկության վարույթ:*

Մինչդեռ Սնանկության դատարանն անտեսել է, որ թիվ ՍՆԴ/2860/04/23 սնանկության գործի ավարտի հիմքով դրա շրջանակում առանձին քննվող քաղաքացիական գործը քաղաքացիական դատարանին փոխանցելու հիմքերը տվյալ դեպքում բացակայում են: Հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով սնանկության գործի շրջանակում առանձին քննվող սույն քաղաքացիական գործը քննող իրավասու դատարան է Սնանկության դատարանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործն ըստ «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ «Մունլայթ Լայֆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Տավրոս ԿՎՄ» փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է քննության Սնանկության դատարանում:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՇԴ/7184/02/22 քաղաքացիական գործն ըստ «Ձեռնարկատեր+Պետություն Հակաճգնաժամային Ներդրումների Կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ «Մունլայթ Լայֆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Տավրոս ԿՎՄ» փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ